Հետազոտական աշխատանք

Կազմակերպության տվյալներ ● Անվանում, հասցե ● Տնօրեն ● էլ. հասցե ● Հեռախոս	«Մասնակցային դպրոց» կրթական հիմնադրամ Վահրամ Սողոմոնյան masnakcayindproc@gmail.com +37493581908
Հետազոտության թեմա/վերնագիր ● Հետազոտության թեմա	Անգլերենը՝ ամենօրյա հաղորդակցման միջոց 3-րդ դասարանում
Ուսուցչի տվյալներ ● Անուն, ազգանուն, հայրանուն ● Մասնագիտություն ● Հեռախոս ● էլ. հասցե ● Դասավանդվող առարկաներ ● Դասարաններ	Զինա Եգորյան Զարգանդի Անգլերենի ուսուցչուհի +374 94 16 96 06 zinayegoran@mail.ru Անգլերեն լեզու 4, 6, 8, 9, 11-րդ դասարաններ
Ուսումնական հաստատության տվյալներ ● Անվանումը, հասցե ● Հեռախոս ● էլ. հասցե (տնօրենության) ● Web կայքի հասցե	Կոտայքի մարզ, Ազատ Սիմոնյանի անվան միջնակարգ դպրոց, Կամարիսի 8-րդ փողոց 14 kamaris@schools.am

Բովանդակություն

Ներածություն----------

---------- 3 3

1. Հաղորդակցական կարողությունների տեսակները---------- 4

2.Ընթերցանությունը՝ անգլերենի հաղորդակցական կարողությունների զարգացման միջոց ---------- 8 4

Եզրակացություններ, առաջարկություններ---------- 135

Օգտագործված գրականության ցանկ---------- 16 6

7

Ներածություն

Հանրակրթության պետական չափորոշիչով «օտար լեզուներ» ուսումնական բնագավառի տարրական դպրոցի սովորողի համար սահմանված են հետևյալ վերջնարդյունքները՝ «առնվազն երկու օտար լեզվով հասկանա և օգտագործի ծանոթ և պարզ նախադասություններ՝ բավարարելու կոնկրետ կարիքները, կարողանա ներկայանալ, ներկայացնել իր շրջապատի մարդկանց՝ իր և նրանց մասին հաղորդելով պարզ տեղեկություններ, հաղորդակցվել գրավոր և բանավոր՝ գործածելով պարզագույն կառույցներ»: Հետազոտական աշխատանքում պարզելու եմ, թե արդյոք անգլերենի ուսուցման մեր հեղինակային մոտեցումներով կարողանում ենք սովորողների մոտ ձևավորել պետական չափորոշիչով սահմանված վերջնարդյունքներին համապատասխան լեզվական կարողություններ:

Հետազոտական աշխատանքում ուսումնասիրելու և պարզելու եմ, նաև թե առաջավոր կրթական համակարգեր ունեցող երկրներում հաղորդակցական կարողությունների ո՞ր տեսակներն են (ունկնդրում, ընթերցանություն, մենախոսություն, գրավոր խոսք, փոխներգործություն, լեզվանյութի կիրառում) առաջնայինը համարվում կրտսեր դպրոցում: Աշխատանքի ընթացքում տեղեկատվություն ստանալու համար ուսումնասիրելու եմ մանկավարժական նորարար գաղափարներ, առաջադեմ աշխատանքային փորձեր պարունակող հետևյալ էլեկտրոնային ամսագրերը՝ edutopia.org, teachingenglish.org.uk , European Journal of Foreign Language Teaching

Հետազոտական աշխատանքի ընթացքում պարզելու եմ նաև, թե կրտսեր դպրոցում անգլերենը որպես օտար լեզու ուսուցանելու ընթացքում ուսումնական գործունեության ո՞ր ձևերն են ամենաարդյունավետը, եթե մեր հիմնական նպատակը սովորողների հաղորդակցական կարողությունների զարգացնելն է: Կրտսեր դպրոցում անգլերենի հաղորդակցական կարողությունները զարգացնելու համար ի՞նչ ուսումնական գործունեության ձևեր են օգտագործում առաջադեմ կրթական համակարգեր ունեցող երկրներում: Արդյո՞ք իմ մանկավարժական մոտեցումները և դասավանդողի հնարքները նորարարական են և համընկնում են աշխարհում ընդունված, փորձարկված և դրական արդյունքներ ցույց տվածներին:

1. Հաղորդակցական կարողությունների տեսակները

«Օտար լեզուներ» ուսումնական բնագավառի նոր չափորոշիչներում հաղորդակցության չափորոշիչները արտահայտվում են կարողություններով՝ ունկնդրում, ընթերցանություն, մենախոսություն, գրավոր խոսք, փոխներգործություն, լեզվանյութի կիրառում:

Հիմա իմ առջև հետազոտական աշխատանքի խնդիր եմ դնում. արդյո՞ք կրտսեր դպրոցում իմ իրականացրած անգլերենի ուսուցման հեղինակային մոտեցումները օգնում են, որպեսզի սովորողները ձեռք

բերեն նոր չափորոշիչներով սահմանված հաղորդակցական կարողությունները: Միանգամից պետք է ասեմ, որ տարրական դպրոցում դեկավարվում եմ բրիտանացի անգլերենի ուսուցիչ, անգլերենը որպես օտար լեզու ուսուցանելու դասագրքերի հեղինակ՝ Լուիս Ջորջ Ալեքսանդրի հաղորդակցական մոտեցման սկզբունքը օտար լեզու սովորող սկսնակների համար. «Հնարավոր չէ գրել մի բան՝ նախքան դա կարդալը: Հնարավոր չէ կարդալ մի բան՝ նախքան դա խոսելը: Հնարավոր չէ խոսել մի բան՝ նախքան դա լսելը»: [3, 62-66]

Անգլերենը որպես հաղորդակցման միջոց այն է, թե ինչպես ենք մենք մեր գաղափարները փոխանցում ուրիշներին, և լեզվի երկրորդական գործառույթն է արտահայտել ինչ-որ մեկի զգացմունքները, վերաբերմունքը կամ մտքերը:

Առևտրից մինչև զվարճանք, անգլերենը ծառայում է որպես հաղորդակցության համընդհանուր լեզու:

Բացի այդ, յուրաքանչյուր ոք, ով խոսում է անգլերեն աշխարհի ցանկացած մասում, հասանելի է պրոֆեսիոնալ տարբերակների առատությանը: Ինչպես այն դարձել է անհրաժեշտ պահանջ շատ ոլորտների և մասնագիտությունների համար, դուք պետք է սովորեք խոսել այն որպես ընդհանուր լեզու:

Սովորաբար 1,2,3,4,5 և 6 դասարանները նրանք են, ովքեր գրում են շարադրություն անգլերեն լեզվի կարևորության մասին:[2, 30-36]

Ստորև ներկայացված է նմուշ:

Անգլերենը մի լեզու է, որը բարձր է գնահատվում և հանդիսանում է մի քանի ազգերի մայրենի լեզուն, ներառյալ Միացյալ Նահանգները, Ավստրալիան և Միացյալ Թագավորությունը: Այս լեզուն ունի տարբեր բարբառներ և գրային համակարգեր, որոնք լայնորեն կիրառվում են ամբողջ աշխարհում:

Այս լեզուն ունի երկար, հետաքրքրաշարժ պատմություն, որը դեռևս բավականին պարզ է սովորել:

Այս պատմական կապերը այնպիսի լեզուների հետ, ինչպիսիք են լատիներենը և գերմաներենը, հեշտացնում են այլ լեզուների ըմբռնումը: Այն նաև պարունակում է բառապաշարների առատություն և բավականին ճկուն է:

Անգլերենի իմացությունը գնահատվում է միայն որոշ միջազգային թեստերի միջոցով, ինչպիսիք են GRE-ը, TEFL-ը և այսօր, զարգացման լեզուն ներթափանցում է ուսումնական հաստատությունների բոլոր ուսումնական ծրագրերը:

Դերախաղը գիտելիքների, հմտությունների ձեռքբերման հետաքրքիր ձևերից մեկն է: Այն հնարավորություն է տալիս բարդ իրավիճակները հասկանալու և ինքնուրույն գործելու: Դերախաղի կիրառման ամենալավ տարբերակը կենդանի խաղն է: Դերախաղը հաճելի իրավիճակների արտացոլում կարող է լինել: Օրինակ, երբ պատրաստվում ենք դասարանով ճամփորդության գնալ, կարող ենք քննարկել պարտականությունները, գնումները, ով ինչ է անում, ինչ է բերելու: Ստեղծում ենք իրավիճակ, դերախաղը:

Դերախաղը խիստ սահմանափակումներ չպետք է ունենա, որպեսզի չխանգարի երեխաներին ավելի ազատ գործելու: Ցանկալի կլինի, որ սովորողների քանակը շատ չլինի, որպեսզի խումբը նպաստի հանգիստ

և հերդաշնակ միջավայրի ստեղծմանը: Իսկ եթե սովորողների թիվը մեծ է, ապա կարելի է դասարանը բաժանել երկու խմբի՝ մասնակիցների և հանդիսատեսի, այնուհետև սովորողները տեղերով կփոխվեն:

Դասարանում դերային խաղերի օգտագործումը նպաստում է փորձի ձեռքբերմանը: Դրանք կարող են լինել հանպատրաստից, չմշակված: Դերային խաղերի ավարտին կարելի է եզրակացություններ անել, վերլուծել սովորողների վարքագծի դրսևորման պատճառները, քննարկել առավելությունները, թերությունները, նշել, թե ինչ հնարավոր լուծումներ կարելի էր տալ տվյալ իրավիճակում:

Դերախաղի նպատակն է

- Զարգացնել սովորողի իմացական գործընթացները (մտածողություն, երևակայություն, ուշադրություն) և հուզակամային ոլորտը (հույզեր, զգացմունքներ...) ստեղծարարությունը:
- Զարգացնել սովորողի հնարամտությունը, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակությունը, աշխատասիրությունը, հետևողականությունը:
- Ձևավորել իր և իր ընկերների գործունեությունը գնահատելու կարողությունը:• Զարգացնել անհատական և խմբային աշխատելու կարողությունը: Միմյանց հարգելու, փոխօգնություն ցուցաբերելու պատրաստակամություն:

Ըստ իս ուսուցիչը պետք է խրախուսի դերային խաղերը դասարանում՝ զարգացնելով սովորողների օտար լեզվով հաղորդակցվելու հմտությունները, կարողությունները, բանավոր խոսքը: Սովորողը պետք է լինի սեփական կրթության ակտիվ դերակատարը: Մասնակիցը լինելով սեփական ուսումնառության պլանավորման, իրականացման և վերլուծության գործընթացին՝ սովորողը նպատակային սովորում է սովորել: Դերային խաղը գործնական աշխատանքի այն տեսակներից է, որը լայնորեն տալիս է այդ հնարավորությունը: Դերային խաղին պետք է վերաբերվել ոչ թե ժամանցի, այլ գործնական բազմափուլ աշխատանքի, որի յուրաքանչյուր փուլ լուծում է կոնկրետ նպատակներ: Հետևաբար պետք է հանգամանորեն պլանավորել դերախաղը՝ նախապես սահմանելով նպատակ և վերջնարդյունք:

Առանձնացվում է դերային խաղի երկու տեսակ՝ ուղղորդված և հանպատրաստից՝ դասակարգման հիմքում դնելով սովորողի ակտիվ կամ պասիվ որոշում կայացնելու հանգամանքը:

Ուղղորդված դերային խաղի արդյունավետությունը ապահովելու համար դրանք պետք է լինեն մանրակրկիտ ծրագրված և լավ ուղղորդված:

Հանպատրաստից դերախաղի ժամանակ հակառակը. Պետք է ապահովել սովորողների լիակատար ազատությունը:

Դերախաղերը սովորաբար իրականացվում են երեք փուլով

- Նախապատրաստման փուլ
- Խաղի փուլ
- Անդրադարձի փուլ

Առաջին փուլում քննարկվում են այն կանոնները, որոնք պետք է պահպանվեն դերախաղի ժամանակ: Բաժանվում են դերերը, նշանակվում են դիտորդները և ստանում դիտարկման հստակ առաջադրանք: Դերակատարները կարդում, մտածում են իրենց դերերի մասին:

Երկրորդ փուլում խաղացողները ստանձնում են իրենց դերերը և կատարում դրանք կախված իրավիճակից՝ կիրառելով ձեռք բերված հմտությունները: Մյուսները կատարում են իրենց դիտորդական հանձնարարությունը:

Երրորդ փուլում խաղացողները արտահայտում են խաղի ընթացքում իրենց ունեցած զգացմունքները: Դիտորդները ներկայացնում են իրենց դիտարկումները: Հետո խոսվում է դերախաղի ժամանակ կայացրած որոշումների ու գործողությունների մասին և աշխատանքը ամփոփվում է եզրակացություններով:

Օտար լեզուների ուսուցման ընթացքում գերիշխող է հաղորդակցական ուղղվածությունը: Այստեղ շեշտը դրվում է լեզվական հաղորդակցության խնդիրների իրականացմանը նպաստող մեթոդների և ռազմավարությունների վրա: Տիրապետելով երկխոսական կարողություններին սովորողը պետք է հմտանա լսել-խոսել խոսքային գործունեության տեսակների հերթագայության մեջ: Այստեղ հստակ նշանակություն է ստանում համապատասխան հաղորդակցական պայմանների (իրադրությունների) ստեղծումը և ռեպլիկների ցուցադրումը:[3, 50-56]

2.Ընթերցանությունը՝ անգլերենի հաղորդակցական կարողությունների զարգացան միջոց

Ընթերցանությունը խոսքի գործունեության անկախ տեսակ է,որն ապահովում է գրավոր հաղորդակցության ձև: Հայտնի է, որ ընթերցանությունը տեղեկատվություն ստանալու հիմնական միջոցներից մեկն է: Նրա դերը հատկապես մեծ է այսօր, քանի որ այն հնարավորություն է տալիս մարդուն բավարարել իր անձնական ճանաչողական կարիքները: Ընթերցանության գործընթացն ինքնին ներառում է վերլուծություն, սինթեզ, ընդհանրացում, եզրակացություն, կանխատեսում: Այն հղկում է ինտելեկտը և սրում զգայարանները: Օտար լեզվով կարդալը որպես խոսքի գործունեության տեսակ և որպես հաղորդակցության անուղղակի ձև,ըստ շատ հետազոտողների ,մարդկանցից շատերի համար անհրաժեշտություն է: Ընթերցանության գործընթացը հիմնված է տեխնիկական կողմի վրա,այսինքն հմտությունների վրա, որոնք լեզվական երևույթների տեսողական-խոսքային-լսողական կապերն են իրենց նշանակությամբ, որի հիման վրա կատարվում է գրավոր նշանների ճանաչում և հասկացում: Կարդալը ակտիվ, կառուցողական և ինտերակտիվ մտավոր գործունեություն է: Ընթերցանությունը հաղորդակցական և ճանաչողական գործունեության ամենակարևոր տեսակներից մեկն է:

Այսօր խիստ է դրված օտար լեզուների իմացության պահանջի խնդիրը: Այս խնդրի լուծման հետ կապված ծագում է նաև ուսուցանվող լեզուների դասավանդման որակը բարելավելու նպատակով օպտիմալ և համապատասխան մեթոդիկա մշակելու անհրաժեշտություն: Այս համատեքստում ժամանակակից մեթոդիկայի գլխավոր ուղղություններից մեկը ընթերցանության ուսուցումն է որպես օտարալեզու(մասնավորապես ֆրանսերենի)հաղորդակցման և միջմշակութային իրազեկության հիմնական բաղադրիչ: Զնայած մեդիակրթության սրընթաց զարգացմանը, ու նաև դրա շնորհիվ, ընթերցանությունը շարունակում է մնալ տեղեկատվության ձեռքբերման հուսալի աղբյուր: Օտար լեզվի դասավանդման հիմնական նպատակներից մեկը պետք է լինի նաև ընթերցանության ուսուցումը:[3, 62-63]

Ընթերցանությունը որպես լեզվական-հաղորդակցական իրազեկության կարևոր ճանաչողական բաղադրիչ ենթադրում է ոչ միայն գիտելիքների հանրագումար, այլ նաև գիտելիքները ինքնուրույն լրացնելու, ընդլայնելու, համապատասխան տեղեկատվությունը դուրս բերելու և տեքստի բովանդակության ստուգումն իրականացնելու կարողությունների ձևավորում: Ընթերցանության ուսուցման մեթոդիկան և տեքստի բովանդակության ըմբռնման ստուգումը կարևորագույն բաղադրիչ են ինչպես հանրակրթական, այնպես էլ բովանդակ ուսուցման համագումարում:

Օտար լեզվով ընթերցանության ուսուցման նպատակը «հասուն ընթերցանության» նվազագույն մակարդակ ապահովելն է, որը թույլ է տալիս սովորողներին ստանալ անհրաժեշտ տեղեկատվություն անծանոթ տեքստ կարդալիս: Օտար լեզվի դասավանդման ընթացքում տարբերակվում են հետևյալ տեսակները.

- Թռուցիկ ընթերցանություն
- Մանրակրկիտ ընթերցանություն

- Որոնողական ընթերցանություն
- Տեքստի ընդհանուր բովանդակությանը ծանոթանալու ընթերցանություն:

Ընթերցանության ուսուցման նպատակի իրագործումը մասնակիորեն պայմանավորված է այն հանգամանքով, թե կոնկրետ դեպքում ընթերցանության որ տեսակներն են ուսուցման գործընթացում իրականացվում:

Թռուցիկ ընթերցանության նպատակն ամենաընդհանուր գծերով բովանդակության մասին պատկերացում կազմել է, ինչի հիման վրա կարդացողը որոշում է, թե արդյոք իրեն պետք է, հետաքրքրում է տեքստում պարունակվող տեղեկատվությունը: Դրա անհրաժեշտությունը որոշելու համար բավական է կարդալ վերնագրերը կամ ենթավերնագրերը, առանձին նախադասություններ: Ըստ էության տեղի է ունենում ընտրովի ընթերցանություն:[2, 40-47]

Թռուցիկ ընթերցանությունը զարգացնելու համար տրվում են հետևյալ առաջադրանքները.

- Առանձնացնել ճիշտ և սխալ հաստատումները(vrai/faux)
- Տեքստը ներկայացվում է անավարտ պարբերությունների տեսքով: Սովորողները ընտրում են յուրաքանչյուր պարբերության շարունակությունը:

Մանրակրկիտ ընթերցանությունը ենթադրում է բովանդակության ամբողջական ընկալում: Մանրակրկիտ ընթերցանության համար տրվում են հետևյալ առաջադրանքները. Հետաքրքիր ձև է հարցումը կամ ինքնահարցումը, որի շնորհիվ սովորողները կարդալու ընթացքում փորձում են պատասխանել տեքստին վերաբերող հարցերին: Բազմակողմանի հարցադրումներն օգտագործվում են և՛տեքստը հասկանալու կարողությունների ձևավորման և՛ ստուգման համար:

Վերընթերցումը համարվում է կարևորագույն ռազմավարություններից մեկը, որի միջոցով սովորողները փորձում են հստակեցնել և լավ ընմբռնել տեքստում պարունակվող տեղեկությունը: Ուսուցիչը պետք է սովորեցնի սովորողներին տեքստը կարդալ իմաստային հատվածներով՝ նպաստելով դժվարությունների հաղթահարմանը: Վերընթերցումը կարելի է զուգակցել հետևյալ աշխատանքների հետ.

ա) տվյալ պարբերությունից գտնել այն նախադասությունը, որտեղ խոսվում է ... մասին,

բ) տեքստը բաժանել իմաստային խմբերի,

գ) վերնագրել յուրաքանչյուր պարբերություն,

դ) ընդգծել յուրաքանչյուր պարբերության կարևոր նախադասությունը, միտքը,

ե) փորձել հակիրճ ներկայացնել տվյալ պարբերության իմաստը:

Քանի որ ընթերցանության միջոցով հաղորդվում է ոչ միայն նոր տեղեկատվություն, այլև ներմուծվում է նոր բառապաշար, անհրաժեշտ է վերընթերցման ընթացքում իրականացնել նաև բառիմաստի բացահայտման տարբեր ռազմավարություններ:

Որոնողական ընթերցանության նպատակն է անծանոթ տեքստում գտնել կոնկրետ տեղեկատվություն, փաստեր և այլն: Այս տիպի ընթերցանությունը ուղղված է տեքստում կոնկրետ տեղեկատվություն գտնելուն: Այդ պատճառով էլ առաջադրանքը պետք է ճիշտ արտացոլի լուծման ենթակա խնդիրները:

Այս դեպքում առաջարկվում է տեքստը կարդալ ոչ թե ամենայն մանրամասնությամբ, այլ աչքի անցկացնել և կողմնորոշվել՝ գտնելով անհրաժեշտ տեղեկատվությունը: Այս դեպքում կարելի է առաջարկել հետևյալ առաջադրանքները.

- Ուսուցիչը նախապես առաջարկում է թեմային վերաբերող որոշակի հարցեր, որոնց պատասխանն սովորողները պետք է գտնեն տեքստից:
- «Նշումներ անելու» ռազմավարությունը նույնպես նպաստում է որոնողական ընթերցանության զարգացմանը:

Ըստ ընթերցանության դասավանդման օտար լեզուների ծրագրի, ավագ դպրոցի սովորողը պետք է հասկանա պաշտոնական և մասնագիտական թեմաներով տարբեր ժանրերի պատկանող տեքստեր՝ ճանաչելով հեղինակի տեսակետը, անելով համապատասխան դատողություններ և եզրահանգումներ: Ավանդաբար, օտար լեզուների ուսուցման մեթոդներում խոսում են լեզվական հմտությունների և խոսքի հմտությունների ձևավորման մասին: Եթե խոսենք ընթերցանության մասին,ապա խոսքի հմտությունները այս դեպքում ներառում են տեքստից տեղեկատվություն հանելու տարբեր տեխնոլոգիաների տիրապետումը, դրանց համարժեք օգտագործումը կապված առաջադրանքից: Այնուամենայնիվ կարդալու տեխնիկան այս բոլոր հմտությունների հիմքում է: Եթե այն բավականաչափ չձևավորենք, չհասնենք այս հմտության ավտոմատացման, ապա բոլոր ընթերցման տեսակները կվտանգվեն:

Ճիշտ ընթերցանությունը պահանջում է նպատակ: Պետք է հասկանալ, թե որն է ընթերցանության իմաստը: Մարդիկ տարբեր նպատակներով են կարդում,սակայն նպատակ միշտ պետք է լինի: Ընթերցողը չի կարող հիշել ամեն բան, սակայն պետք է հիշել ամենակարևորը: Արդյունավետ կարդալու համար ընթերցողը պետք է պատասխանի հետևյալ հարցերին՝

__Ո՞րն է այս տեքստն ընթերցելու նպատակը:

__Ի՞նչ կտա դա ինձ:

__Ինչպե՞ս եմ նախատեսում օգտագործել այն, ինչ կսովորեմ:

__Որքանո՞վ է ինձ համար կարևոր ընթերցածս:

Այս բոլոր հարցերը նպատակի մասին են: Կարդացողի ուղեղը պետք է հստակ հասկանա նպատակը, այլապես այն շատ շուտ կանջատվի:

Ուսուցիչը կարող է ստեղծել ընթերցանության նպատակը հետևյալ կերպ.

- Կարդացեք, մինչև հասնեք այն հատվածին, որտեղ...
- Կարդացեք, մինչև պարզեք, թե որտեղ է տեղի ունենում պատմությունը և այլն:[1, 14-15]

Նպատակը եւ հետազոտական հարցը	Ուսումնասիրության նպատակն է անգլերեն լեզվի հաղորդակցումը դպրոցում: Հարց: Ի՞նչ կարողություններ և հմտություններ է զարգացնում անգլերեն լեզվի հաղորդակցումը:
Ո՞ր առանցքային կոմպետենցիային/կարողունակության ն է ուղղված նպատակի ուսումնասիրությունը	լեզվական գրագիտություն
Հետազոտության թիրախային խումբը և շրջանակը /քանակ, սեռային բաշխում/	3-րդ դասարան Տղա՝ 15 Աղջիկ՝ 12
Օգտագործված հետազոտական մեթոդները, գործիքները (օրինակ՝ քանակական հետազոտություն՝ հարցաթերթիկի միջոցով, որակական հետազոտություն՝ խորին հարցազրույցի միջոցով եւ այլն)	որակական հետազոտություն՝ խորին հարցազրույցի միջոցով
Հետազոտության իրականացման ժամանակահատվածը	Սեպտեմբեր 2023 թ.

Հիմնական բովանդակություն

Գրականության ակնարկ ● Մեջբերումներ արդեն արված հետազոտություններից,	Ինչևէ, այս կամ այն ընթերցանության տեսակի իրականացմամբ է պայմանավորված վարժությունների, նաև ստուգման եղանակների ընտրությունը: Ընդ որում պետք է հաշվի առնել հետևյալը. Քանի որ ընթերցանության

• Մեջբերումներ գրականությունից, տեղեկության վստահելի աղբյուրներից: <u>Պարտադիր է կատարել հղում աղբյուրին</u>	տեսակները տարբերվում են ըստ գործունեության արդյունքի, այսինքն՝ ըստ տեքստի բովանդակության ընկալման աստիճանի, տեղեկատվության ըմբռնման և հիմնական իմաստի ընկալման աստիճանը հնարավոր է սահմանել համակցելով այն տեքստում պարունակվող ամբողջական տեղեկատվությանը: [2, 44-45]
Հետազոտության ընթացքը	**Lesson 15. Unit 4 Letter Hh** Հարցեր և առաջադրանքներ չափորոշչային նվազագույն պահանջները ստուգելու համար. 1.Fill in the words 1) Dad has a 3)It is a 2) Ann has a 4) It is a

	5) It is a 2. Make negative 1) Ann has a hat 3)Ann has a cake 2) Dad has a hammer 4)Dad has a nail 3. Fill in the missing letters ha___ ho___se he___ ho___se ham___er 4. Write the letter Hh____ Հարցերին պատասխանելով և առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա. 1) գլխարկ, ձի, հավ, տուն, մուրճ բառերի թարգմանությունները 2) Ունենալ բայի ժխտական կազմությունը 3) գլխարկ, ձի, հավ, տուն, մուրճ բառերի ուղղագրությունը 4) Hh տառի գրելաձևը Հարցերին պատասխանելու էր և առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա. 1) Թարգմանել պատկերված նկարները 2) Կիրառել ունենալ բայի ժխտական ձևը 3) Հեգել hat, horse, hen, house, hammer բառերը 4) Գրել Hh տառը

Եզրակացություններ, առաջարկություններ

Այսպիսով, լեզվի բնական ուսուցումը կարող է տեղի ունենալ միայն այնպիսի միջավայրում, որտեղ յուրաքանչյուրը խոսում է սովորողի հետ այն լեզվով, որը նա սովորում է: Մինչդեռ «Օտար լեզու» նշանակում է լեզու,որը սովորողն ուսումնասիրում է օտար լեզվի դասին իր սովորական օգտագործման տարածքից դուրս, և որը չի օգտագործվում մայրենի լեզվի հետ մրցակցության մեջ առօրյա հաղորդակցության ժամանակ: Ուստի դասավանդողի գերխնդիրը լեզուն ամենօրյա հաղորդակցության դաշտ բերելն է: Դպրոցական միջավայրում սովորողը իսկապես մոտիվացված կլինի միայն այն դեպքում, եթե չունենա դպրոցում լինելու տպավորություն:

Լեզվի ուսուցումը կուտակային է և պետք է շարունակվի դասարանից դուրս, քանզի հաղորդակցությունն է, որը թույլ է տալիս սովորողին սկսել և շարունակել սովորել: Ակնհայտ է, որ հաղորդակցվելը և սովորելը սերտորեն կապված են միմյանց հետ, ուստի հանրակրթական դպրոցների աշակերտները ևս պետք է հնարավորություն ունենան իրենց հաղորդակցական կարողությունները զարգացնելու միջազգային համբարներում:

Վերհանված արդյունքներ, եզրակացություններ, պատասխան հետազոտական հարցին	Օտար լեզուն կկատարի իր հիմնական գործառույթը, եթե դուրս գա դպրոցի ու դասարանի պատերից այն կողմ և չսահմանափակվի շաբաթական մի քանի դասաժամով, իսկ դրա համար պետք է շարժվել ժամանակին համահունչ և ընդունել դարի մարտահրավերները:
Այլ տեղեկատվություն	

Օգտագործված գրականության ցանկ

1. Modern English, Second Edition, by Marcella Frank. Regents/Prentice Hall 1993
2. Martha Kolln, Rhetorical Grammar: Grammatical Choices, Rhetorical Effects, 5th ed. Pearson, 2007
3. Thomas P. Klammer, Muriel R. Schulz, and Angela Della Volpe, Analyzing English Grammar, 5th ed. Longman, 2007

Հաշվետվության կցված նյութեր	
• Հետազոտության գործիքներ (հարցաթերթիկներ կամ այլ) • Նկարներ • Արդյունքներ	